ՆՈՐ-ԴԱՐ

№ 161 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 4 Հոկտեմբերի 1888 Երեքշաբթի 4 Հոկտեմբերի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 161

Տարեկան 10 բուբլի, վեց ամսով 6 բուբլի, երեք ամսով 3 բ. 50 կ., ամսով 1 բ. 50 կ., հատով 5 կոպեկ։
Բաժանորդ գրուած են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Нор-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի առն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գնի 2 կ., բնկերների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոցին կայսերական Մեծութիւնները Թիֆլիսում։
Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ.— Ակնարկ։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
Յայտարարութիւններ։

ՆՈՑԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Թիֆլիսի ազնուականների պարահանդէսը կայացաւ սեպտեմբերի 29-ին, Թիֆլիսի ժողովարանի շինութեան մէջ՝ իշ. Ի. Կ. Քագրատիօն-Մուխրանսկու տանը, որին միացրած էր և իրեն իշխանի բնակարանը։ Գարի ահագին դահլիճը փառահեղ կերպով զարդարած էր մետաքսէ բաց-կապտագոյն կերպասով և լուսաւորուած էր երեք մեծ չահերով և քիւերի երկարութեամբ շարած հրագներով։ Դահլիճի անկիւններում գրուած էին միջօրեային բոյսեր։ Իշ. Բագ.-Մուխրանսկու բնակարանը, որ կից էր ժողովարանի արեւմտեան կողմից և նշանակուած էր Օգոստափառ Հիւրերի համար, զարդարած էր պարսկական և Կովկասեան թանկագին գորգերով և թանկագին կտորներով։ Պատրաստած էր հարուստ բուֆէտ՝ քաղցրեղէններով, պտուղներով, ամեն տեսակ զովարար ըմպելիքներով, ուտելիքներով և գինիներով.... Պարահանդէսի սկիզբը նշանակուած էր ժամը 9-ին, բայց արդէն 8-ից առաջ սկսան հաւաքուել պարահանդէսի կարգադրիչները, պատուաւոր պահնորդների թուում եղող ազնուականները, նահանգական ազնուականների առաջնորդ իշ. Ի. Կ. Բագրատիօն-Մուխրանսկին և պարահանդէսի կարգադրիչ գաւառական ազնուականութեան առաջնորդի ամուսին Մ. Դ. Մաղալօվան և յետոյ Ն. Հրաւիրուածները։ Ժամը 9½-ին դահլիճն արդէն լցուել էր։

Երեկ. 9½ ժամին լսուեց «ուրան» և իսկոյն նուագածուները սկսան ռուսական ազգային հիմնը։ Օգոստափառ Հիւրերին ընդառաջ գնացին պարահանդէսի կառավարչուհի իշխանուհի Մ. Դ. Մաղալօվան և կառավարիչ իշ. Ի. Կ. Բագ.-Մուխրանսկին, և գաւառական ազնուականների պարագլուխները, աստիճանների երկու կողմը շարուած էին ազնուականներից պատուաւոր պահնորդներ։ Մ. Դ. Մաղալօվան բաղդ ունեցաւ Թագուհի Կայսրուհուն մատուցանելու Թարմ ծաղիկների փառաւոր մի փունջ։ Հինգ որ Նոցին Մեծութիւնները հասան լուսնից համար նշանակուած սենեակը, Թիւրքիան զգալէ գնդի լարտւոր գործիների վրայ ածող խումբը սկսեց պօլօնէզ ածել։ Դռները բացուեցան և պօլօնէզում, պալատական սովորութ կարգով, գնացքը սկսաւ օրէց-ցերէմօնիամայստէր իշ. Գօլէգօրուկին Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհու նաժիշտ գրաֆուհի Գօլէնիշչեվա-Կուտուզովայի հետ։

Առաջին զոյգը կազմում էր Թագուհի Կայսրուհին իշ. Բագրատիօն-Մուխրանսկու հետ. Թագուհու հետից ընթանում էր Թագաւոր-Կայսրը իշխանուհի Քեթեվան Գէօրգիևնա Ջամբակուրեանի-Օրբէլեանի հետ. երրորդ զոյգն էր Ժառանգը իշխանուհի Ա. Մ. Մելիկովայի հետ, իսկ նրանց ետևից Մեծ Իշխան Գէօրգիյ Ալէքսանդրովիչը իշ. կառավարչապետի օգնականի ամուսնու Ե. Բ. Շէրէմետեվայի հետ, իսկ իշ. Տրուբէցկոյը իշխանուհի Ա. Ա. Ամիլախվարովի հետ։ Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Գէօրգիյ Ալէքսանդրովիչը հաճեցաւ պարել Թագուհու նաժիշտ Ե. Ի. Խամախվալի հետ, իսկ նրանց դէմ պարում էր գեներ.-ադ. Չերեվինը իշ. Վասիլչիկովայի հետ։ Ժամը ուղիղ 11½-ին Օգոստափառ Հիւրերը հաճեցան վերադառնալ պալատ՝ ժողովրդի բարձրաձայն «ուրա»-ով։

Ի լրումն Նոցին Մեծութիւններին սարքուած պարահանդէսի, կառավարչուհին Թագուհի Կայսրուհուն մատոյց բուն տեղական նուագելու գործիքները—Ճիանուրը, չահերան և այլն փոքր և գեղեցիկ շինած. մի քանի կանայք մատուցին արծաթէ մանղալ և երկու շամփուր, որոնք գործ են ածւում խորոված պատրաստելու համար։

Օգոստափառ Հիւրերի գնալուց յետոյ պարահանդէսը դեռ երկար չդադարեցրեց ժամը երկուսին սկսան պարել կատիլիոն։

Պարահանդէս հրաւիրուած էին Նոցին Մեծութիւններին ողջունող բոլոր բարձրաստիճան անձերը, տեղական գեներալիտէտը, քաղաքային քարձր պաշտօնեաները, համարեա գատական բոլոր անդամները և ուրիշ ծառայողները, նոյնպէս և Թիֆլիսի նշանաւոր քաղաքացիները։ Հիւրերը հրաւիրուած էին իրենց ընտանիքներով։ Բոլոր հրաւիրատոմսերի թիւը հասնում էր մօտ հազար հոգու։ Պարահանդէս հրաւիրուած էին և տեղական երէք ազնուատոհմ օրիորդներ, որոնց Թագուհու նաժիշտի կոչում տուին. դրանք են իշխանադուստր՝ Մելիկովան, Արղութինսկի-Դոլգօրուկովան և Սումբատովան։

*

Սեպտեմբերի 30-ին, Նոցին Մեծութիւնները, իրենց Թիֆլիսում լինելու երրորդ օրը բաղդատորացրին Նաւթլուղը՝ այցելելով նրան, ուր հաճեցան գնալ հիւանդանոց, Ողորմածութեան քոյրերի ընկերութեան մօտ և մանկական ապահովարանը։ Այցելութեան համար նշանակուած էր առաւոտեան ժամը 10-ը։ Անհամար բազմութիւնը առաւել և առաւել մեծանալով, լցուել և լցւում էր Չաւլարարի և Նաւթլուղի միջև տարածութիւնը և չարուած էին Նոցին Մեծութիւնների անցնելու ճանապարհի բոլոր շրջակայ վողոցներում։ Հասարակութեան միայն մասը աշխատում էր տեղ բռնել Նաւթլուղում՝ պինուրական հիւանդանոցի մօտերքը։ Ժողովրդից շատերը իրենց ընտանիքներով լցուել էին տների տանիքները։

Նոցին Մեծութիւնների մօտենալու միջոցին Ցիցիանովսկի կոչուած գաբիների վրայ քարձրացան հարիւրաւոր մալական աղջիկներ՝ սպիտակ շորերով և մազերը ծաղկով հիւսած, Նրանք շուրջ տեղաւորուած էին նրանց ծննդները ռուսական զգեստներ հագած։ Աղջկերանցից մինը Թագուհի-Կայսրուհուն մատոյց Թարմ ծաղիկներից մի փունջ։ Նրանցից այն կողմը շարքով կանգնած էին համքարներն իրենց գրօշակներով։ Համքարներից ոմանք հագած էին հին շորեր՝—ցանցահիւս գլուխ, լանջապանակ, սպազաւարդ՝ ցանցահիւս երեսնոցով, և ձեռքերում հին պէնքեր բռնած։

Ամբողջ ճանապարհը զարդարած էր գեղեցկապէս ցիցիանովի գաբիների ամբողջ ընթացքով չինուած էին գրասանդներով զարդարած կամարներ անհամար գրօշակներով, տները Թաղուած էին գորգերի և գրօշակների մէջ։ Բայց մանաւանդ աչքի էր ընկնում Նաւթլուղի հիւանդանոցի զարդարանքը։ Մի քանի տասնեակ սաժէն հեռու չինած էր սրահակ, ուր հաւաքուած էին հիւանդանոցի բժիշկները ու ծառայողները։ Ժամը 10-ից 35 վ. անցած Նոցին կայսերական Մեծութիւնները բաց կառքով սրահակից անցնելով մտան հիւանդանոցի բակը։ Երկրորդ կառքում նստած էին Ժառանգն ու Մեծ Իշխան Գէօրգիյ Ալէքսանդրովիչը։ Նրանց ետևից բաց կառքով գալիս էին իշ. կառավարչապետը, պինուրական և պարտատան գլխաւորները, իշ. կառավարչապետի օգնականը, Ժառանգի դաստիարակ գեն.-ադ. Դանիլովիչը, գեն.-ադ. Չերեվինը, օրէց-ցերէմօնիամայստէր իշ. Գօլէգօրուկին, օրէց-հոֆմարշալ Տրուբէցկոյը, գեն.-լեյտ. Տրօցկին, Թիֆլիսի փոխ-նահանգապետ սենեկապետ իշ. Շերվաշիձէն, գեն.-լեյտ. Գուբկինը, լեյտ-բժիշկ Գերշ. Թագուհու նաժիշտներից Գօլենիշչեվա-Կուտուզովա I և II գրաֆուհիները և այլն։

Հիւանդանոցի դրան Նորին կայսերական Մեծութիւնը հաշիւ ընդունեց օրապահ սպայից և գլխաւոր բժշկից, Թագուհին ընդունեց ողորմածութեան քոյր ս. Խրզէնսոնից մի փաստաւոր փունջ։ Նոցին Մեծութիւնները կրկին բակ գնաց եկան և մտան անդամահատական բաժինը, ուր մանրամասն զննութիւն անելով և մի քանի հիւանդներին հարցեր տալով բաղդատորացնելով, գնաց եկան պատկից և փէյդչերեան ուսումնարանը։ Պատկում կարգով կանգնած էին բարձկաս 8-ից 9-ն հազուստների մանուկ ուսումնարանի և փէյդչերեան ուսումնարանի աշակերտները, որոնցից կազմուած նուագածուների խումբը Նոցին Մեծութիւնների մօտենալու միջոցին սկսեց նուագել և նուագել մինչև Չաւլարարի և Նաւթլուղի միջև տարածութիւնը և չարուած էին Նոցին Մեծութիւնների անցնելու ճանապարհի բոլոր շրջակայ վողոցներում։ Հասարակութեան միայն մասը աշխատում էր տեղ բռնել Նաւթլուղում՝ պինուրական հիւանդանոցի մօտերքը։ Ժողովրդից շատերը իրենց ընտանիքներով լցուել էին տների տանիքները։

Նոցին Մեծութիւնների մօտենալու միջոցին Ցիցիանովսկի կոչուած գաբիների վրայ քարձրացան հարիւրաւոր մալական աղջիկներ՝ սպիտակ շորերով և մազերը ծաղկով հիւսած, Նրանց շուրջ տեղաւորուած էին նրանց ծննդները ռուսական զգեստներ հագած։ Աղջկերանցից մինը Թագուհի-Կայսրուհուն մատոյց Թարմ ծաղիկներից մի փունջ։ Նրանցից այն կողմը շարքով կանգնած էին համքարներն իրենց գրօշակներով։ Համքարներից ոմանք հագած էին հին շորեր՝—ցանցահիւս գլուխ, լանջապանակ, սպազաւարդ՝ ցանցահիւս երեսնոցով, և ձեռքերում հին պէնքեր բռնած։

Ամբողջ ճանապարհը զարդարած էր գեղեցկապէս ցիցիանովի գաբիների ամբողջ ընթացքով չինուած էին գրասանդներով զարդարած կամարներ անհամար գրօշակներով, տները Թաղուած էին գորգերի և գրօշակների մէջ։ Բայց մանաւանդ աչքի էր ընկնում Նաւթլուղի հիւանդանոցի զարդարանքը։ Մի քանի տասնեակ սաժէն հեռու չինած էր սրահակ, ուր հաւաքուած էին հիւանդանոցի բժիշկները ու ծառայողները։ Ժամը 10-ից 35 վ. անցած Նոցին կայսերական Մեծութիւնները բաց կառքով սրահակից անցնելով մտան հիւանդանոցի բակը։ Երկրորդ կառքում նստած էին Ժառանգն ու Մեծ Իշխան Գէօրգիյ Ալէքսանդրովիչը։ Նրանց ետևից բաց կառքով գալիս էին իշ. կառավարչապետը, պինուրական և պարտատան գլխաւորները, իշ. կառավարչապետի օգնականը, Ժառանգի դաստիարակ գեն.-ադ. Դանիլովիչը, գեն.-ադ. Չերեվինը, օրէց-ցերէմօնիամայստէր իշ. Գօլէգօրուկին, օրէց-հոֆմարշալ Տրուբէցկոյը, գեն.-լեյտ. Տրօցկին, Թիֆլիսի փոխ-նահանգապետ սենեկապետ իշ. Շերվաշիձէն, գեն.-լեյտ. Գուբկինը, լեյտ-բժիշկ Գերշ. Թագուհու նաժիշտներից Գօլենիշչեվա-Կուտուզովա I և II գրաֆուհիները և այլն։

Հիւանդանոցի դրան Նորին կայսերական Մեծութիւնը հաշիւ ընդունեց օրապահ սպայից և գլխաւոր բժշկից, Թագուհին ընդունեց ողորմածութեան քոյր ս. Խրզէնսոնից մի փաստաւոր փունջ։ Նոցին Մեծութիւնները կրկին բակ գնաց եկան և մտան անդամահատական բաժինը, ուր մանրամասն զննութիւն անելով և մի քանի հիւանդներին հարցեր տալով բաղդատորացնելով, գնաց եկան պատկից և փէյդչերեան ուսումնարանը։ Պատկում կարգով կանգնած էին բարձկաս 8-ից 9-ն հազուստների մանուկ ուսումնարանի և փէյդչերեան ուսումնարանի աշակերտները, որոնցից կազմուած նուագածուների խումբը Նոցին Մեծութիւնների մօտենալու միջոցին սկսեց նուագել և նուագել մինչև Չաւլարարի և Նաւթլուղի միջև տարածութիւնը և չարուած էին Նոցին Մեծութիւնների անցնելու ճանապարհի բոլոր շրջակայ վողոցներում։ Հասարակութեան միայն մասը աշխատում էր տեղ բռնել Նաւթլուղում՝ պինուրական հիւանդանոցի մօտեր

երկրորդ և երրորդ սորբերը էլ վօրձնցօվի կան և Արդաբիլի բերդի բանալին, որ ռուս զօրքերն առել են 1828 թ., Թաւրիզի բերդի բանալիները, Աբաս-Աբադի բանալիները, Երևանի բերդի բանալիները (1827-ին առած) և այլն։ Ցեսար ուշադրութեան արժանի են ռուսական յաղթական զօրքերի վերցրած հին զօռալիկները։

Նոցին Մեծուլթիւնները հաճեցան 20 րոպէ մնալ «Փառքի տաճար»-ում և այնուհետև ուղևորեցան Կազէտեան կօրպուսս։

Կազէտեան կօրպուսի զրանք Նոցին Մեծուլթիւններին դիմաւորելու կօրպուսի տեսուչ գեն.-մայօր Ե. Ն. Օսոբրօգօվնն։ Նոցին Մեծուլթիւնները հաճեցան այցելել պահլճիները, ուր ամբողջ չաւկիրտները կուռք-կուռք չարուած էին։ Աշակերտները երգեցին խօրով «Боже, Царь благославенный» եւ пойди» և «Черноброва чернооká», իսկ նուագածուների խումբը ածեց Շուբերտի «Ժողէ մէկ»։ Կէս ժամից աւելի մնալուց յետոյ ուսումնարանում, Նոցին Մեծուլթիւնները հաճեցան պալատ վերադառնալ։

Կօրպուսի չինովը փառաւորապէս զարդարած էր ներսից և դրսից։

Թագուհի Կայսրուհին կօրպուսում հաճեց նկատել, որ աւ Հասարակ Թիֆլիսի ուսումնարանական հաստատութիւններում նուագածութիւնն խիստ պարզուած է։

Նոյն օրը երեկոյեան ժամը 7-ին պալատում ճաշկայ սարքուած, որին հրաւիրուած էին բարձրագոյն հոգևորականները, պետական ատեհանաւորները, պետուորական և քաղաքային բարձր պատուհանները, ազնուականութիւնն ու կանայք։

(«Кав.»)

***

Մնացեալ տեղեկութիւններն մենք քաղում ենք տեղական մեծ ազդ թերթերից։

Երեկոյեան ժամը 9½-ին Նոցին Մեծուլթիւնները Թագաժառանգն, Մեծ Իշխան Գէօրգի Ալէքսանդրովիչն և սովորական հետևորդները ուղղակուլթեամբ պալճէցին «Ժողովրդական ատեհաստատուլթիւնն», որ «Մուշտայիդ» այգում կառմել էր քաղաքը Մեքսալէեան փողոցը, արդէն անցնում էր կայսերական հանդիսաւոր գնացքը, հրաշալի տեսարան էր ներկայացնում գրծչարները, պրօտանգների և զարդարանքները առատուլթեամբ փողոցի վերջում՝ Մուշտայիդի մուտքի ծայրին շինած էր կամար «Добро пожаловать» ազատանգրուլթեամբ։ Այստեղից, Հեմելիքի երկու կողմում, մինչև նոր շինած պաւիլիօնը, շինած է ցանկապատ ամբողջապէս լաստիրներով զարդարուած, որոնք երկու կարգ չուլթաներ էին կազմում գուռաւը կրակներով։

Ա. Հասարակ Մուշտայիդի լուսաւորուլթեան շատ էր աջողուել։ Մոխրագոյն մահուդով ծածկուած և մինչև կայսերական պաւիլիօն հասնող երկու մեծացած հրապարակները մէջ ընդհատ և պաւիլիօնում, վառած էին էլէքտրական աղեգալներ, որոնք շուրջ տարածում էին նորը, գգուելի բայց պղծած լոյս։ Մանաւանդ այդ լոյսի տակ գեղեցիկ էին Արքայական պաւիլիօնն մօտ շինուած փոնտանները։ Այսպիսի զարդարուլթեան շնորհիւ հրապարակը նմանում էր մի մեծ փառաւոր դահլճի, ցցուած ընտիր և բազմահոգ հասարակուլթեամբ։ Ամեն կողմ, ուր սրանում եաչ երևում էին չէրքեսներ, կրակներ վերակ և նշանապահներ, անվերջ նշանապահներ։ Չնչին լուսի կանգնից չուլթեր, սկսած ամենապարզից մինչև ամենաարուեստականը պաւիլիօնն և ամբողջ հրապարակը լցուած տարուել քան եօթ հազար հոգու ուրախական «ուռռա»-ի ազդանիշերով կայսերական ընթացքը եկաւ պաւիլիօն։ Կայսերական Չիբերը բազմեցան Արքայական օթեակում։ Պաւիլիօնը շինած է արևելեան ձևակով։ Գլխաւոր դահլիճը ծածկուած է ինը գմբեթներով, որոնք շինած են տեղական «դարբազ»-ների ձևով։ Զանգկողմը—Արքայական բնդունարանն է, ուր բուֆէտը։ Արքայական օթեակը կեստրչանաձև շինած է գալէրէյի առաջ։ Օթեակի առաջն է շինած պարգաւոր դահլիճը, իսկ հրապարակին եւ աւտոմ առաջնէն գալէրէյ և բուֆէտ Ժողովրդի համար։ Արքայական օթեակի երկու կողմը շինած են չադրաուանները։ Դէպի Քուր տանող գծուչքերը վերջանում է Նոցին Մեծուլթիւնների պրուցարանով, որտեղից պէտք է նայէին հրանտարուլթեան վրայ։ Պաւիլիօնը գարդարած է գերբերով և արևելեան չուլիդաններով պատերից կախած էին եղջերուի եղջերներ, հին պէնքեր և ամաններ։ Ցատակին փռած է գորգ։

Թագաւորը և Թագուհին բակմեցան Արքայական օթեակում՝ իրենց մօտ ունենալով Մեծ Իշխաններին, իսկ ետևում Թիֆլիսի պ. գլխաւորները իր ամուսնու հետ։ Իսկ երկրորդ և կառավարչապետը կանգնած էր կայսրուհուց կողմը։

Այնուհետև չուռամ Արքայական օթեակի առաջ կայմուհից մի չղջան և սկսուեց սովորական լէզգինկա պարը։ Կայսրը հանդիսեց պարողների անունը։ Լէզգինկան քոտ երևումին, ինչպէս և ազնուականների զարմհանդէսի միջոցին, հետաքրքրութեց Օգոստոսիան Հանդիսականներին և երկար տևեց։ Այդ միջոցին Քուրի ափին, արևմտեան հեմելիքների մէջ, գետնի վրայ փռուած էր տաւրան, ուր նատած էին համթարները, մօտ 220 հոգի և ուռում խմում էին։

Ժողովրդի մի մեծ բազմութիւն, գլխաւորապէս կանանցից, նատած էին Քուրի էջքերում շինած նստարանների վրայ՝ Քուրի աջ ափին լինելիք հրանտրուլթեան լաւ դիտելուն պատահով։

Լէզգինկան վերջանալուց յետոյ, Արքայական բնտանիքը խառն ամբոխի մէջից անցնելով, անցաւ պաւիլիօնի արևմտեան կողմը, Քուրի վրայ շինած պուղարանը։ Սարսափելի խառնուածք էր։ Կառավարչապետը տեսնելով այդ խառնուածքը, յայտնեց Թագաւորին. «Ներեցէք, Ջերդ Մեծուլթիւն, մեզանում ժողովուրդը սլաղց է, բայց ոչ մի տեղ կառավարիչն այնքան հանգիստ չէ կարող լինել, ինչքան այդ ժողովրդի մէջ»։

Թագաւորը ժողովրդի ողջոյնին երկու-երիք անգամ բարձրաձայն ասաց. «Շնորհակալ եմ ուրախակցուլթեան և անկեղծ ընդունելուլթեան համար»։

Հենց օր Թագաւորն իւր Ընտանեօք գնաց գրուցարանի մօտ, որ շինուած կեցին նշանի շուշխուանան և սկսուեց հրանտրուլթիւնը, որ մօտ մի ժամ տևեց և ամբողջ Քուրի աջ ափը համարեա Թագուած էր կրակից մէջ։ Մանաւանդ առաւել գեղեցիկ էին Նոցին Կայսերական Մեծուլթիւնների և Թառանգի անունների փակագրերը, նոյնպէս և 2,000 գունաւոր փուչիկ, որ համաչափ քաղաքի կէս մասն էր ծածկում։ Ցետոյ Քուրի ջրի վրայ ձգեցին 25 տաժէն բարձրուլթիւնից դէպի Քուրը և հրկիզին չափազանց բան ներս վատ չէր նաև տեղական հարուստների պատկերացումը, որ ներկայացնում էին Քուրի վրայ հոսող բազմութիւնը վրայ լինգալական կրակով լուսաւորած։

Ժամը 12-ին, այնուհետև Թագաւորի գնալուց մի փոքր յետոյ, ժողովուրդը սկսեց ցրուել։ Աւերդը է տալիս որ գրասենքի սկզբից մինչև վերջը կար գաղափարութիւնն օրինակելի էր։

*

Շաբաթ օր, հոկտեմբերի 1-ին, առաւօտեան ժամը 6-ից պալատի առաջ սկսեց խառնուել ամբոխը։ Պալատի մուտքից դէպի Թվորցօվայա փողոցը շարուած էին ազնուականներից պատուաւոր պահնակը և համբարձերքն երեսից զրօշակներով. պալատի հարաւային դրան կողմը հաւաքուած էր գեներալիտէտի կօրպուսնըց-կօմանդիրը գեն.-ադ. իշ. Ճավճավաձէի պատուիրտալիամբ։ Ժամը 9-ում պատաւորապէս 8-ին կառավարչապետը դուրս եկաւ գուռը։ Իններորդ ժամի սկզբում գրանը երևեցաւ Թագաւոր Կայսրը Թագուհի Կայսրուհու, Թագաժառանգի, Մեծ Իշխան Գէօրգիի Ալէքսանդրովիչի հետ։ Թագաւոր Կայսրը մօտենալով գեներալիտէտին, ողջունեց նրան ձեռք տալով և ուրախութեան հարցեր արեց։ Այդ պատուին արժանացրեց և Թագուհի Կայսրուհին, Կայսրուհին հագել էր չիթէի հասարակ զգեստ, ցետոյ դրան մօտեցաւ չորս ձի լծած կարէտ. Թագաւորը Թագուհու հետ հաճեցան նստել մէջը, մնաց կառքի մէջ նստած Թառանգը և Մեծ Իշխան Գէօրգի Ալէքսանդրովիչը։ Մնաց կառքերի մէջ նստած Աբքայական հեռնորդները։ Անիսկի և օղ դղրդացնող «ուռռա»-ներով և մազմանքներով Օգոստափառ Հերբերն հանդարտ բնկան։ Հանդէսը տղղուեց դէպի Հաւլաբար Կօմկէթի հանդարտհով (Յենօձգայ)։ Ամբողջ հանդարտի վրայ կանգնած էր անհամար բազմութիւնը. տանիքներն ու պատշգամբները լցուած էին մարդոցմով։

—

Տեղ-ռատ լինելիքում կարդում ենք.

Սեպտեմբերի 30-ին պալատում կատարած Բարձրագոյն Հարկ միջոցին Թագաւոր-Կայսրը բաժակ առաջարկեց երևելս բարգաւաճման համար Ձարից յետոյ, իւր մօտ կանչելով ազգ նուականների պարագլուխ իշ. Ի. Կ. Բագրատիօն-Մուխրանսկուն և Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Ա. Ս. Մատինեանցին, Թագաւորը ազնուականների և քաղաքի կենացն առաջարկեց։

—Սեպտեմբերի 28-ին Թագաւոր Կայսրը Բարձրագոյն պարգեւատրեց՝—պալատանական գնդապետ իշ. Կ. Ի. Բագրատիօն-Մուխրանսկուն Նորին կայսերական Մեծուլթեան պալատական եգերմէյստերի կոչումով. Թիֆլիսի գաւառական ազնուականների պարագլուխ Վ. Ա. Մազալովին՝ Նորին Մեծուլթեան պալատական սենեկապետ. Սղնախի գաւառական ազնուականների պարագլուխ իշ. Անդրօնիկովին, դատական բարձրանների Թիֆլիսում և առանձին յանձնաժողովների պալատնական իշ. Բագրատիօն-Մուխրանսկուն Նորին Մեծուլթեան պալատի կամէր-ֆուրիէրը։

—Սեպտեմբերի 30-ին ամենագթութեամբ հաստատած են Սինահատակ կիսատեքնան Ծանր խաչի կարգի տալեւտական կանանց մէջ՝—կովկասի կառավարչապետի օգնականի ամուսնին ասիկին Շէրէմետեվան, իշխանուհի Քեմեխան Գէօրգիեվնա Ջամբակօսեան-Օրբէլեանին և իշխանուհի Ա. Ակքսանդրա Մակալօվնա Մելիկօվան։

—Թագաւոր Կայսրն ամենագթութեամբ մեզեցիական պրոտօղէկի տարեշան շնորհեց այն բոլոր ազնուականներին, որոնցից կազմուած էին Նորին Մեծուլթեան պատուաւոր պահնորդները։

—Թիֆլիսի պօլիցմէյստէր իսկական տալեւտական խորհրդական Ա. Ա. Բոտօնիսան Բարձրագոյն շնորհուած է Նորին Մեծուլթեան կարնիձոտիլ Ջեան կապն։ Ընդ այ չորսիսար ժառանգն Նորին Մեծուլթեան անուան փոխանուած վրան։

ՔՐՈՆԻԿՈՆ

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶԻՑ.—Նոցին կայսերական Մեծուլթիւններին ներկայացուցչապատասխանատուները Թէռեքի մարզի և մեծ Սիմֆան կայարան իջմներնանքը Պղզարից, որ նուիրեց տեղւոյս հայոց դպրոցներին երկու հատ արևելեան փոխադրութեան տոմսեր 50-ական րուբլնանոց, այն պայմանով, որ տոկոսը միայն ծախսի հոգալարձուԹիւնը, իսկ տոմսերը մնան ընդ միշտ ուսումնարանի սեպհականուլթիւն։ Դրօշոցների վարչուլթիւնը յիշեալ յարգելի պարոնին գրաւոր չնորհակալուԹիւն յայտնեց։ Իջմներնանքները տուհասրակ յայտնի են իրենց քարեգործուլթիւններով. այդ նոր երկոլթէ էլ, սակայն ցանկալի էր, որ բերնեցրն էլ հեռանալուց առաջ օրինակին, Աբդարև, արժանի է մի այդպիսի առատաձեռնուլթիւն և քարեգործուլթիւն յիշատուլթեան չնորհակալուլթեան։

—

ԳՅՕՐՏՍԻՑ.—Սեպ. 26-ին, առաւօտեան ժամը 8-ին Գէօրտսում բատականին զգալի երկրաշարժ եղաւ, որ տևեց ընդամենը 12 վայրկեան. շարժի ընթացքը արևելքից դէպի արևմուտք էր։

Չանկեսորում, Պափանի կողմը, մի քանի ևնուրք աւադակներ են երևացել, որոնք հանդարտչօրդներին և գնացողներին կողոպտում են առանց որևէքի։ Ահա երկու շաբաթ է ինչ Գէօրտսում և իր շրջակայքում բատականին գեղեցիկ եղանակ է. գիւղացիները ցանքը արդէն վերջացրել են, ուսան ցորենի գինը մի փութը երկու է։

—

Երեքշաբթի օր, հոկտեմբերի 1-ին պ. գինուորական մինիստր գեներալ-ադիւտանտ Պ. Ս. Վանովսկին այցելեց գինուորական նահանգական գրատարանը։

—

ՏԱՖԼԻՑ.—Աւխազեան գիւղում, մի երիտասարդ իւր կնոջ մասին իւր մօր ասած բամբասանքին լսելով, պատից կախած հրացանն առնելով, սպանում է իւր կնոջ հայացքը բացուելով, գնդակը մտնում է մօտ նրա ծոծրակը. բժիշկը հասնում է երեկի մարդնից։ Ազգաչէով երկու հոգի կինազրատ են լինում։

—

Պարսից և առաջին գիմնազիաների մէջև եղած տարաձայնուԹեան վրայ կատարուելիք արձակման եկեղեցու հիմքը ձգելու մասին գրել էինք։ Այդ արարողուԹիւնը տեղի ունեցաւ Ս. Թադէոս առաքելոյ եկեղեցում հինգշաբթի օրը, ժամը 10-ին։ Ներկայ էին Նորին ԳերազնուԹիւն Ս. Թադէոս առաքելոյ վանքի մատուռների եպիսկոպոս Գերասիմ Ալամդարեան, Ս. Թադէոս առաքելոյ վանքի վարդապետ Ստեփանոս

Հարն էլ վճռելու է մի քանի քսան կոպեկ։

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ.—Շաբաթ երեկոյան, սեպտեմբերի 17-ին տեղիս ուսումնարանի դահլիճում ս. Սոֆրազեանցը Վահանի և քաղաքին մի քանի թատերասէրների ծանօթացմամբ ներկայացրին «Քաղաքական ճահ» փոքրիկ, 5 գործողութեամբ և կատակածաճաք եղէր վոդեվիլը մի գործողութեամբ։ Այս վերջինը կատարուեց պարզակերէն, ներկայացումը շատ աջող անցաւ, մեզնից մէկ քանում անկանոն վարուելու։—ս. կոչակարիչը երկրորդ գործողութեան միջոցին, երբ քաղաքացիները չար նայում էր տեսարանին, սկսեց ուժգակները զննել այնպէս որ Հանդիսականներից օչ մէկը օչ մի խօսք անգամ չկարողացան հասկանալ այդ գործողութենից։ Բայց այս վերջին վոդեվիլն այնքան աջող կատարուեց, որ Հասարակութեան մէջ սաստիկ ոգևորութեան գաղթեցրեց, Հասարակութիւնն անդադար ծափահարում էր։

Տոմսակները սակայն շատ պժուած են ծախուում, այնպէս որ Թատերաչէները սակաւած առաջին և երկրորդ կարգի տոմսակները ծրարով ուղարկում են տեղիս յայտնի պատուհասներին և տերուտատ վաճառականներին, բայց սրանք փոխանակ Թատերասէրներին քաջալերելու, մերժում են նրանց առաջարկութիւնը։

Ներկայումս չեն ներկայացնում, եղել է 50 րուբլի Սոֆրազեանցները, ինչպէս լսում ենք, շարաթ օրը, սեպտեմբերի 24-ի երեկոեան պիտի տան վերջնական ներկայացում։

—Այգեկութը. մեզանում սկսուած է խաղողի բերքը այս տարի նուազ լինելով, գինին էս անցեալ տարուանից անհամեմատ նուազ կը լինի։ Գինին այժմ մեզանում ծախուում է պուդը 4 րուբլով։

Թիֆլիսի հրապարակներում և պատքանեորում վաճառուող ուտելիքեղէնների գները հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի մէկը հետեւեալներն են.

Թուած Հաց սպիտակ ալիւրից 1 Ֆ. 5 կ., ցորենի ալիւրից 1 տեսակի 1 Ֆ. 3½ կ., 2-րդ տեսակի 1 Ֆ. 3 կ., Թոնրի Հաց նոյն ալիւրից 1 տեսակի 1 Ֆ. 5 կ., 2-րդ տեսակինը 4 կ., 3-րդ տեսակինը 3½ կ., տավարի և ցորենի Հասարակ ալիւրի խառնուրդից Թուած լաւաշ 1 տեսակի 1 Ֆ. 5 կ., 2-րդ տեսակինը 4 կոպէկ։ Տաւարի միսը 1 տեսակի 1 Ֆունտն առանց ոսկրոյ կարօղ 8 կ., 2-րդ տեսակինը 7 կ., ոսկրին 14 կ., ոչխարի մսի 1 Ֆ. 8 կոպէկ։

Այս գները պատահեր չեն գիւղական կանների համար, որոնք իրենց մթերքները վաճառում են Թիֆլիսի հրապարակներում և վաճառանոցներում։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ, 20 սեպտեմբերի.—Սեպտեմբերի 18-ին, կիրակի օրը, տեղիս Հայոց ուսումնարանի դահլիճում կայացաւ Հասարակական ժողով։ Ժողովին նախագահում էր Նորին Պայծառափայլութեան իշխան Դադիանին։ Ժողովին ներկայ էին քաղաքիս գեղուհիները, Թաղապետները, առանձին Հարուստ պատուաւոր անձեր և բազմաթիւ ժողովուրդ։

Ժողովի նպատակն էր՝ առաջին. խնդրամատոյց լինել կառավարութեան, որ քաղաքումն Հաստատուի քաղաքային ինքնավարութիւն, քաղաքն ունենայ իւր քաղաքագլուխը, իւրակ ը ր դ։ Հաստատուի տպագիր արական—բէալական գպրոց։

Առաջին Հարցն, այն է՝ քաղաքային ինքնավարութիւն, պէտք է այնքան անհրաժեշտ է մեր քաղաքի Համար, որ պատ ո՛ չ միայն չընդդիմացան, այլ մեծ Համակրութեամբ և ակնկալութեամբ ընդունեցաւ այդ մասին Հաստատակութեան կազմելս։ Քաղաքային ինքնավարութեան չընդհարուիլ յոյս կայ, որ մեր քաղաքում վերջապէս ամեն եղուծուած կարգի և կանոնի տակ մտնէ։ Քաղաքի ներքին կառավարութիւնը ընդհակառակ, հարկերի և ծախսերի քանակութիւնն օրզոտի և հարկերը բաժանուելիս բաղեւոր Հարստութեան ու համեմատութեամբ։ Ինքնավարութիւն Հաստատուելով յոյս կայ, որ մեր քաղաքի վիզոցներ չեն մնայ իրենց ներկայ ոգոմների դրութեան մէջ, քաղաքը կը մաքրուի ցեխից և Թոզից և այլ Հակասանուցական ախտերից երևելութեամբ։ Գպրոց

ժակ առաջարկեց արքայական զոյգի և իտալական փառաւոր բանակի համար։

ԲԵԼԳՐԱԴ.—Թագաւորը Հարաշանինին հրամայեց հեռանալ երկրից. բայց Հարաշանինն ընդիմանում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 հոկտեմբերի.—«Вѣст. Финансовъ»-ի մէջ այսօր հրատարակուած է պետական վերահսկման 1887 թ. հաշուից քաղուածքներ։ Գլխաւոր թուերը հետեւեալն է. սովորական մուտք եղել է 829,662,000 ր. 796,369,000-ի փոխարէն. սովորական ծախս եղել և պիտի լինի 835,850,000 րուբլի՝ հաշուեկշռի մէջ նշանակած 832,928,000 ր. փոխարէն։ Սովորական ծախսերի մէջ վարկ բացուած է 12,645,000 ր., որ չէր նախատեսուած. փակուած է 9,691,000 ր. վարկ և արտակարգ ծախսերի հաշուին փոխանցուած է 2,922,000 րուբլի։ Սովորական բիւդջէի մէջ բաց է 6,188,000 ր., ոչ. ներմուծուած 9,300,000 րուբլին, որ առաջացել է նախկին վարկային հաստատութիւնների հաշիւների աւարտումից և որոնք 1887 թ. հաշուեկշռով նշանակուած էին սովորական ծախսերն ու մուտքերը ծածկելու համար։ Արտակարգ նպաստները ստացուեցան 144,542,000 ր.՝ փոխանակ 84,973,000 ր., ինչպէս նախատեսուած էր հաշուեկշռով։ Աւելանալու պատճառն այն է, որ արտակարգ եկամուտի աղբիւրների մէջ մտաւ 1887 թ. 4% ներքին փոխառութիւնը 100,000,000 րուբլու, ի հաշիւ որոնց 1887 թուին, բացի 1888-ի մուտքն և 1887 թուի կուպոնի հատուցուած %-ը, հաշուեկշռի համաձայն, ստացուել 81,068,000 րուբլի։ Արտակարգ ծախսերը, հաշուեկշռի համաձայն, եղած են բացառապէս երկաթուղիների և նաւահանգիստների վրայ, բայց ընդհանուր ծախսից 3,321,000 րուբ. պակասացրած, այսինքն, ծախսուած է և դեռ պիտի վճարուի 45,093,000 րուբլի փոխանակ նշանակուած 48,414,000 րուբլու։ 1887 թուի հաշուեկշռի գործադրութիւնից առաջիկայ տարիների համար մնաց 46,205,000 րուբլու ազատ գումար։

Երէկ, Սերգէեվսկի անապատում կատարուեց գր. Ադլերբերգի թաղումը՝ Մեծ Իշխանների, քաղաքային և զինուորական բարձր աստիճանաւորների և դիպլօմատիական խումբի ներկայութեամբ։ Նոցին Կայսերական Մեծութիւնները ուղարկեցին փառաւոր պսակ ապիակ և կարմիր վարդերից հիւսած, մի ուրիշ փառաւոր պսակ իւր ձեռով դրեց Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնան։

Ս.բատաահմանեան լրագիրներում տարածուած լուրերի առթիւ, թէ Մակեդոնիայում եղած յուզման պատճառը ռուսական խարդաւանքներն են, «Journ. de St. Pétersbourg»-ը յայտարարում է, որ բօլղարներն հազիւ թէ հաւատան դրանց, գիտենալով, որ Բօլղարիայում Ռուսիան ոչ մի գործակալութիւն չունի և նրան թողել է իւր սեպհական խնամքին։ Լրագիրն այդ մասին չէր էլ լիշատակիլ, եթէ դրանք չարատատուէին, ի մեծ զարմանս իւր, այնպիսի լուրջ լրագրի մէջ, ինչպիսին է «Fremdeblatt»։

ԵԼԻՍԱՎԵՏԳՐԱԴ.—Երէկ բացուած է Բօմնօ-կրեմէնչուկի երկաթուղու ամբողջ գիծը։

ԼՕՆԴՕՆ.—Երէկ այստեղի լրագիրներում հրատարակուեցան գոկ. Մաքէնզու գրքից ընդարձակ քաղուածքներ Ֆրիդրիխ կայսրի հիւանդութեան մասին։ Քաղաքական մերկացումները չկան գրքի մէջ. նա գլխաւորապէս ուղղուած է պրօֆէսսոր Բերգմանի դէմ, որին գոկտոր Մաքէնզին մեղադրում է խաղովակի տգիտաբար պատրաստելուն համար, որից առաջացաւ կանխաժամ մահը։ Բերգմանը Մաքէնզու դէմ գատ է սկսում նրան մեղադրելով իրեն զրպարտութեան համար։

ՀՈՕՄ.—Երէկ փառաւոր ռօնախմբութիւն կատարուեց. կապիտօլիումում բացուած է մի տախտակ հետեւեալ վերտառութեամբ. «գերմանական կայսրի այցելութեան լիշատակին» և կօնցերտ եղաւ, որին ներկայ էին 3000 ունկնդիրներ։ Կապիտօլիումը փառաւորապէս լուսաւորած էր էլեքտրական լուսով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

30 Սեպտեմբերի։

Լօնդօն 92,60 ր., 92,25 ր.
Համբուրգ 45,50 ր., 45,40 ր.
Պարիզ 36,55 ր., 36,40 ր.
Պօլուիմպերիալ . . 7 ր. 45 կ. սակ.
Մաքս. կուպօն 148 ր. — կ. սակ.
Արծաթ . . . . 1 ր. 16 կ. սակ.
Բօրսային դիս. 7 և 8%
Պետակ. բանկի 5% տոմս.
1-ին շրջանի. . 98 ր. 12 կ. սակ.
2-րդ . . . . . 96 ր. 50 կ. գն.
3-րդ . . . . . 95 ր. 25 կ. գն.
4-րդ . . . . . 96 ր. 25 կ. գն.
5-րդ . . . . . 95 ր. 87 կ. սակ.
Վերջին 4% .
փոխառութիւնը — ր. — կ. սակ.
100 և 1000 արեւելեան փոխառութեան 5% տոմսեր,
1-ին շրջանի . 94 ր. 87 կ. սակ.
2-րդ . . . . . 95 ր. — կ. սակ.
3-րդ . . . . . 94 ր. 75 կ. սակ.
Առաջին 5% ներքին փոխառութեան
տոմսեր . . . 263 ր. — կ. սակ.
2-րդ . . . . . 238 ր. — կ. սակ.
5½% բէնտեր . 100 ր. 75 կ. սակ.
Ոսկէ բէնտ . . 168 ր. 25 կ. սակ.
Թիֆ. քաղ. վարկի բնկեր.
օբլիգ. . . 81 ր. 75 կ. գն.
Պետական բանկի
4% տոմսեր . . 81 ր. 12 կ. գն.
Երկաթուղու բէնտ 95 ր. 12 կ. սակ.
Ազնուակ. հող. բան.
կի գրաւադիրները 96 ր. 25 կ. սակ.

Պետերբուրգի բօրսային տրամադրութիւնը կենդանացած է առանց գործի։

Խմբագիր-Հրատարակիչ։

ՍԳԱՆԴԱՐ ՍԳԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Իգդիրի երկսեռ դպրոցների գրադարանն այժմ կարգի է դրուած։ Որովհետև հոգաբարձութիւնը չունի այնքան միջոց, որ կարողանայ դպրոցի փողով հարստացնել գրադարանն, ուստի դիմում ենք յարգելի հեղինակներին, թարգմանիչներին և բանասէրներին, խնդրելով իրենց նոր աշխատութիւններից մի-մի օրինակ նուիրեն տեղիս դպրոցների գրադարանին, որը միևնոյն ժամանակ աշակերտների ծնողներին ընթերցանութեան համար նիւթ է մատակարարում։

Հասցէն՝—Игдырь. Библіотека Арм. Школъ.

Գրադարանապետ՝ Բագրատ Մատթէոսեանց։

5—2

GUARANA

De GRIMAULT et C-e
Pharmaciens à Paris
autorisé en Russie

ԳՈՒԱՐԱՆԱ

Պարիզի Գրիմօ և ընկ. Դեղավաճառների

Սոյն փոշու մի ծրարը բաւական է ամենասաստիկ գլխացաւը, ամենազօրեղ անգաթը (migraine-мигрень) բժշկելու։ Այս բուսական դեղն իւր բնական կազդուրիչ յատկութեամբը մեծապէս օգնում և բժշկում է փորացաւը։

Ընդունվում է փոքր ինչ շաքարախառն ջրի մէջ ածելով։

Ամեն մի ափի մէջ 12 ծրար կայ, որոնց վրայ գտնվում է Grimault et C-eի ստորագրութիւնը։

Ծախվում է Պարիզ, Վիվիէն փողոց № 8, դէպօում և գլխաւոր դեղավաճառների մօտ։ Т
(М.) ч 27—5

ՁԳԱԽԻԺԵԱՅ

ՈՍՔԻԿՈՇՏԻ ՍՊԵՂԱՆԻ

Ա. ԲԷՐԳՀՕԼՑԻ

Աչքի ամեն տեսակ կաշա և երևնդ մի քանի օրուայ մէջ ոչնչացնելու համար։ Ծախւում է շատ դեղատներում և դեղապէտի ու ձգամիջային մագազիններում։ Գլխաւոր դեպօն՝—Նեվսկայա դեղատուն, Անիչկովի կամրջի մօտ՝ Պետերբուրգ։
М. 50—2

ՊՕՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ

երթևեկութիւնը պատերազմական-վիճակի ճանապարհով

1888 թ. մայիսի 15-ից մինչև նոյեմբերի 15-ը

Թիֆլիսից դուրս է գալիս

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը առաւօտեան ժամը 9-ին, Մլէթի կայարանում գիշերելով հանում է վլադիկավկազ մեկ օրը երեկոյեան ժամը 8-ին։

Նոյնպէս դուրս է գալիս առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Գուդաուրը կայարանում և վլադիկավկազ հասնելով մեկ օրը ցերեկուայ ժամը 5-ին։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսը դուրս է գալիս ցերեկուայ ժամը 4-ին, առանց գիշերելու, մեկ օրը, երեկոյեան ժամը 7-ին հասնում է վլադիկավկազ։

Նոյնպէս դուրս է գալիս Ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու, մեկ օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում է վլադիկավկազ։

վլադիկավկազից

Հինգ հոգու տեղ ունեցող կառքերը դուրս են գալիս առաւօտեան ժամը 9-ին, գիշերում են Մլէթի կայարանում և մեկ օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս առաւօտեան ժամը 7-ին դուրս են գալիս և գիշերելով Պասանաուր կայարանում, մեկ օրը ժամը 6-ին երեկոյեան հասնում են Թիֆլիս։

Վեց հոգու տեղ ունեցող օմնիբուսները դուրս են գալիս առաւօտեան ժամը 9-ին, գիշերում են Մլէթի կայարանում և մեկ օրը երեկոյեան ժամը 8-ին հասնում են Թիֆլիս։

Նոյնպէս դուրս են գալիս երեկոյեան ժամը 5-ին և առանց Ճանապարհին գիշերելու, մեկ օրը հասնում են Թիֆլիս։ Ձս երեկոյեան ժամը 9-ից 50 ր. անց.

ՆԱԻԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

Նովոնաւաչէն երթևեկութիւն Բաթումից

Օգոստոսի 4. կ. Պօլսի մէջ։

—

Բաթումից գնում է

Երեքշաբթիները. — Կէս օրից յետոյ ժամը 4-ին, ուղիղ գծով, մտնում է Սուխումի և Նովոռօսսիյսկի նաւահանգիստները։

Հինգշաբթիները.—Կէս օրուայ ժամը 4-ին, ուղիղ գծով, Նովոռօսսիյսկի և Կերչի վրայով։

Շաբաթ օրերը.—Երեկոյեան ժամերին, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստները պատահելով։

Երկուշաբթիները.—Երեկոյեան արտաստհմանեան գնացքով կ. Պօլսում։

Բաթումում գալիս է

Երկուշաբթի — Առաւօտը, Օդեսայից, ուղիղ գծով՝ կերչի և Սուխումի վրայով։

Շաբթի շաբաթ — Առաւօտը Օդեսայից, ուղիղ գծով, կերչի և Նովոռօսսիյսկի վրայով։

Ուրբաթ. — Երեկոյեան, Օդեսայից, շրջանառու ընթացքով։

Կիրակի օրերը.—Առաւօտը կ. Պօլսից։

Փոթիից գնում է Բաթում

Երեքշաբթիները. — Առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղագիծ շոգենաւին միանալու, որ մտնում էև Սուխումի։

Ուրբաթի—երեկոյեան կամ գիշերը, շրջանառու Ղրիմ-Կովկասեան Բաթում գնալու նաւը նաւահանգիստ գալուց յետոյ։

Շաբաթ օրերը. — Առ. ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան և Բումֆլոտա Անատօլեան շրջանառու շոգենաւերին միանալու։

Բաթումից գնում է Փոթի

Շաբաթ շաբաթի և կիրակի օրերը.—Նաւի գալուց ժամը որոշում է Բաթումի նաւային գործակալութիւնը՝ նաւը փոթիից գալուց յետոյ։

Բացի այդ, ամեն շաբաթ Օդեսայից Ղրիմ-Կովկասեան նաւահանգիստներից գալիս են փոթի որոշեալ ժամանակներում երթևեկող ապրանքակիր-մարդակիր նաւեր շաբաթ շաբաթի օրերը, լուսաբացին, և գնում են ուրբաթի առաւօտները։ Նիկոլաեւից Օդեսայի վրայով շաբաթ օրերը երեկոյեան Սեվաստօպօլ և Բաթում գալիս են նոյնպիսի նաւեր, որոնք փոթի գալիս են ուրբաթ լուսաբացին և հեռանում է շաբաթ օրը երեկոյեան, վերադառնում է առանց բաթում մտնելու Սեվաստօպօլի և Օդեսայի վրայով գալիս է շաբաթի երեկոյեան։

ԲԺԻՇԿ ՄԻՍԱԷԼ ԵՐՄՈԼԱՅԵՒ

ԱԶԱԼԻԱՆԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ

Նկարագիրը

ՈՒԽՏԱՒՈՐ ՈՒԴԵՒՈՐՈՒԹԵԱՆ

Բաղմաթիւ փոխառութիւններով

Գինն է 50 կոպէկ

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։ (Ա.) Ռ—43

ԱՒԵՒՏՐԱԿԱՆ ԿԱՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՄԵԾ ԱՆԳԱՆՑ ՀԱՄԱՐ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Աւետարանական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական աւետարանական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են *ատեստատներ*։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Աւետարանական Տնտեսութիւն, 2) Աւետարանական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Աւետարանական Թղթակցութիւն, 6) Աւետարանական և մուրհակի կանոնագրութիւն, և 7) գեղագրութիւն։ Ուսումը բանկուելու է սեպտեմբերի 25-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 15-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Լաբօրատօրնայա փողոցի վրայ, № 11։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻՍՊԵՍ եղբ. Տովմիանովների բանկային գրասենեակում և կուրսերի հիմնողի բնակարանում։ Ուսարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисѣ, О. П. Мануэльянцу.

Օգոստոսի 20-ից կուրսերը փոխադրելու են Սէրգիեւսկայի տունը, № 9, Սերգիեվսկայա և Նագորնայա փողոցների անկեանը (դեղատան դիմաց)։

20—17

ՉԻՅԹՈՒՆՅԻՆԵՐԻ ՕԳՏԻՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

„ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ“

Դաշնամուրի համար

1) Vivace
2) Հայոց եղանակ.
3) Բաշիբուզուկի եղանակ.
4) Յարձակումն.
5) Հայոց եղանակ.
6) Թիֆլիսի զուռնա.
7) Քուրդ եղանակ.
8) Նախիջևանի ջրկիրների եղանակ
9) Իլյաս տաղակական.
10) Պարսկական եղանակ.
11) Մօլդավական պար.

Գինն է 1 րուբլի։ Ձանապարհածախսի համար պէտք է վճարել 11 կոպէկ մարկայով։

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան, Թիֆլիսում։

ВОСТОЧНЫЕ МОТИВЫ

для Фортепіано

1) Vivace
2) Армянскій мотивъ.
3) Башибузукскій мотивъ
4) Нападеніе.
(5 Армянскій мотивъ.
6) Тифлисскаязурна.
7) Курдинскій мотивъ.
8) Мотивъ Нахичеванск. водовозовъ.
9) Иджасъ, Персидскій мотивъ.
10) Персидскій мотивъ.
11) Молдавскій танецъ.

Цѣна 1 руб. и 11 к. (марками).
Можно получать въ ред. «Норъ-Даръ», въ Тифлисѣ.

(Խմ.) Х—63

MOTIFS ORIENTEAUX

Pour le Piano

Дозволено цензурою. Тифлисъ, 3-го Октября 1888 г. Տպարան Կավկազ լրագրի գրասենեակին։ Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова